ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10 հունիսի 2021թ. **N 133-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 101-Ա որոշումը, որով գրանցել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը գրանցվել է պատգամավորի թեկնածու:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակը գրանցելիս ներկայացված են եղել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև ՀՀ ընտրական օրենսգիրք) 84-րդ հոդվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության դիմումին կից ներկայացված ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Տիգրան Գրիշայի Արզաքանցյանի (1-ին հերթական համար) վերաբերյալ դիմումին կից ներկայացված են եղել. 26.05.2021թ-ի. գրավոր հայտարարությունը՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից 26.05.2021թ. տրված թիվ 8-34028 տեղեկանքը՝ «Վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին», ինչպես նաև հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի և Տիգրան Արզաքանցյանի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2021թ. հունիսի 10-ին ստացվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Մկրտչյանի թիվ 19/8/36971-21 գրությունը, որով մասնավորապես նշվում է.

«2021թ. մայիսի 20-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն է դիմել Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը (ծնված 07.08.1966թ.)՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանք (այսուհետ՝ տեղեկանք) ստանալու խնդրով: Դիմումին կից ներկայացվել է Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետա-շինարարական ինստիտուտից տրված տեղեկանք այն մասին, որ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը 20.09.2011թ. թիվ 541556840 հրամանով ընդունվել է նշված համալսարանը, սակայն ուսումնառության ժամկետ նշված է 26.09.2018-05.06.2019թթ. ընկած ժամանակահատվածը:

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Տ. Արզաքանցյանի տվյալները չեն բավարարում վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին, քանի որ սահմանային էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ նա դիմում տալու օրվան նախորդող 1461 օրերից 1010 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից: Ընդ որում՝ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարանի Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտում ուսանելու վերաբերյալ Տ. Արզաքանցյանի կողմից ներկայացված տեղեկանքով նշված ժամկետի հաշվանցման դեպքում նույնպես գերազանցվել է օրենքով սահմանված ժամկետը, քանի որ դիմում տալու օրվան նախորդող 1461 օրերից 796 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Վերոգրյալով պայմանավորված՝ Տ. Արզաքանցյանին տեղեկանքի տրամադրումը ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության 24.05.2021թ. թիվ 77 որոշմամբ մերժվել է:

25.05.2021թ-ին Տիգրան Արզաքանցյանը ԱՎ վարչություն է ներկայացրել երկրորդ դիմումը, խնդրելով վերահաշվարկել իր ՀՀ-ից բացակայության ժամանակահատվածը: Դիմումին կցվել է Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտից 19.05.2021թ. տրված նոր տեղեկանք /թիվ 009105/ այն մասին, որ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը 24.02.2018թ.ից 14.06.2019թթ. ժամանակահատվածն ուսումնառել է նշված համալսարանում, համալսարան ընդունվել է 20.09.2011թ. թիվ 541556840 հրամանով:

Նշված տեղեկանքի հիման վրա 2021թ. մայիսի 26-ին Տիգրան Գրիշայի Արզաքանցյանին տրվել է թիվ 8-34028 տեղեկանքը՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին:

Միաժամանակ, 25.05.2021թ. Ոստիկանության ԱՎ վարչության կողմից 8-33440 գրությամբ հարցում է ուղարկվել Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտ՝ Տ. Արզաքանցյանի ներկայացրած տեղեկանքների իսկությունը ստուգելու նպատակով: Հարցման պատասխանը չստանալու հանգամանքով պայմանավորված՝ 02.06.2021թ. ՀՀ ոստիկանության կողմից թիվ 3/8/34787-21 գրությամբ հարցում է ուղարկվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ հայցելով աջակցություն Տիգրան Արզաքանցյանի կողմից ներկայացված տեղեկանքների իսկությունը պարզելու նպատակով:

09.06.2021թ-ին ՀՀ ԿԳՍՄ նախարարությունից ստացվել է Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի (МИТУ-МАСИ) 07.06.2021թ. N-20/21-166 պատասխան գրությունը, որում մասնավորապես նշված է. «....Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը նշված ուսումնական հաստատությունում ուսանել է 01.10.2011թ.-ից (հրաման՝ 20.09.2011թ. թիվ 541558640) մինչև 30.09.2017թ. (հրաման՝ 30.09.2017թ. թիվ 17181200012): Տ. Արզաքանցյանին 19.05.2021թ. տրվել է թիվ 009105 տեղեկանքն այն մասին, որ նա 01.10.2011թ.-30.09.2017թ. ուսումնառել է բակալավրիատի ծրագրով: Ուսումնառության վերաբերյալ առանց համարի տեղեկանքը Տիգրան Արզաքանցյանին չի տրամադրվել»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ս/թ մայիսի 31-ին հրապարակել է 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններում առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների և գրանցված պատգամավորների թեկնածուների ցուցակները: Ըստ այդմ՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցության պատգամավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված է նաև Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը /1-ին համար/:

ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե լիազոր մարմնին դիմում տալու օրվան նախորդող 1.461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից: Նույն նորմով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունից բացակայությունը հարգելի համարելու երկու հիմք, որոնցից է՝ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառությունը:

Կատարված ուսումնասիրություններով հերքվել են Տիգրան Արզաքանցյանի կողմից ներկայացված տեղեկանքներում ամրագրված՝ Մոսկվայի տեղեկատվատեխ-նոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտում ուսումնառության տարեթվերի վերաբերյալ գրառումները, որպիսի փաստական հանգամանքների շրջանակում Տիգրան Արզաքանցյանը ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների ուժով չի կարող համարվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացի, չունի նույն նորմերով ամրագրված՝ ընտրվելու իրավունք, քանի որ չի համապատասխանում

վերջին չորս տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու համար օրենքով պահանջվող ցենզին /դիմում տալու օրվան նախորդող 1.461 օրերից 1005 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից/:...»

Նշված գրությանը կից ներկայացվել է՝

- Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի կողմից տրված տեղեկանքը, ըստ որի՝ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը սկսած 26.09.2018թ. մինչև 05.06.2019թ. ընկած ժամանակահատվածում ուսանել է «Մոսկվա քաղաքում՝ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտ»-ի բակալավրիատի «Պետական և մունիցիպալ կառավարում» կրթական ծրագրով: Համալսարան ընդունվել է 20.09.2011թ. տրված թիվ 541558640 հրամանի հիման վրա: Տեղեկանքը ստորագրված է ռեկտոր Գ. Ա. Զաբելինայի կողմից.

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 24.05.2021թ. թիվ 77 որոշումը, որով քննարկման առարկա դարձնելով համալսարանի 20.09.2011թ. տրված թիվ 541558640 հրամանը, որոշում է ընդունվել մերժել Տիգրան Գրիշայի Արզաքանցյանին վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում ՀՀ մշտապես բնակվելու մասին տեղեկանքի տրամադրումը.

- 19.05.2021թ. թիվ 009105 տեղեկանքը՝ տրված Մոսկվայի տեղեկատվական տեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետական շինարարական ինստիտուտի կողմից, համաձայն որի՝ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը սկսած 24.02.2018թ. մինչև 14.06.2019թ. ընկած ժամանակահատվածում ուսանել է «Մոսկվա քաղաքում՝ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտ»-ի բակալավրիատի «Պետական և մունիցիպալ կառավարում» կրթական ծրագրով: Տեղեկանքը ստորագրված է ռեկտոր Գ. Ա. Զաբելինայի կողմից.

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 25.05.2021թ. թիվ 8-33440 գրությունը՝ ուղղված Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտորին, որով խնդրվել է պարզել Տիգրան Արզաքանցյանի վերաբերյալ ներկայացված տեղեկանքների իսկությունը և խնդրել հստակ հայտնել թե իրականում, որ ժամանակաշրջանում է ուսանել Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը.

- ՀՀ ոստիկանության պետի տեղակալի 01.06.2021թ. թիվ 8-35135 գրությունը ուղղված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարին, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դեռևս ստացված չի եղել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության գրության պատասխանը, խնդրվել է աջակցություն.

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի գրությունը, որով ՀՀ ոստիկանությանն են փոխանցվել Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետա-

շինարարական ինստիտուտի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրությունը Տիգրան Արզաքանցյանի ուսումնառության վերաբերյալ.

- Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրությունը, որով պատասխանել են 04.06.2021թ. թիվ 27/15.2/11863-21 հարցմանը, նշվել է. «Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը, ծնված 1966., հեռակա/դասական/ կարգով սովորել է Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի /ՄԻՏՈՒ-ՄԱՍԻ/ բարձրագույն կրթության լրիվ ծրագրի ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ուղղությամբ 01.10.2011թ.-ից /ընդունման հրաման թիվ 541558640 առ 20.09.2011թ./ մինչև 30.09.2017թ. /հեռացման հրաման/պայմանագրի պայմանները չկատարելու համար/ թիվ 1718120012 առ 30.09.2017թ.: Տ.Գ. Արզաքանցյանին տրվել էր առ 19.05.2021թ. թիվ 009105 տեղեկանքն առ այն, որ 01.10.2011թ-ից մինչև 30.09.2017թ. նա սովորել է բակալավրիատի ծրագրով: Տիգրան Գրիշայի Արզաքանցյանին կրթության վերաբերյալ առանց համարի տեղեկանք չի տրամադրվել»: Գրությունը ստորագրված է ռեկտոր Գ. Ա. Զաբելինա:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ առկա են հակասական բովանդակությամբ փաստաթղթեր, և գտնում է, որ հավաստի է համարվում Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտորի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրությունը:

Նման եզրահանգման համար հիմք են հետևյալ պատճառաբանությունները.

Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտորի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրությամբ փաստվում է այն հանգամանքը, որ 19.05.2021թ. թիվ 009105 տեղեկանքը տրվել է ինստիտուտի կողմից, սակայն այն բովանդակությամբ, որ Տիգրան Արզաքացյանը 01.10.2011թ-ից մինչև 30.09.2017թ. սովորել է բակալավրիատի ծրագրով, մինչդեռ ներկայացված և նյութերում առկա 19.05.2021թ. թիվ 009105 տեղեկանքը ունի այլ բովանդակություն և դրանում նշված է, որ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը սկսած 24.02.2018թ. մինչև 14.06.2019թ. ընկած ժամանակահատվածում ուսանել է «Մոսկվա քաղաքում՝ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտ»-ի բակալավրիատի «Պետական և մունիցիպալ կառավարում» կրթական ծրագրով:

Ներկայացված մեկ այլ տեղեկանքով, որում բացակայում է դրա տրման ամսաթիվը և համարը նշվում է, որ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը սկսած 26.09.2018թ. մինչև 05.06.2019թ. ընկած ժամանակահատվածում ուսանել է «Մոսկվա քաղաքում՝ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտ»-ի բակալավրիատի «Պետական և մունիցիպալ կառավարում» կրթական ծրագրով:

Վերը նշված տեղեկանքների ամսաթվերի համադրումից ակնհայտ է դառնում, որ նույն հանգամանքի վերաբերյալ տեղեկանքներից մեկում որպես ուսումնառության ժամանակաշրջան նշված է 24.02.2018թ. մինչև 14.06.2019թ, իսկ մյուս տեղեկանքում՝ 26.09.2018թ. մինչև 05.06.2019թ.: Նկատի ունենալով, որ տրամադրված երկու տեղեկանքներում ժամկետների համընկնում է առկա, ապա արժանահավատ չէ նշված տեղեկանքների իսկությունը, ավելին երկու տեղեկանքներում առկա կնիքների էսքիզներն ակնհայտորեն տարբերվում են Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտորի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրության կնիքի էսքիզից:

Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտորի 07.06.2021թ. թիվ N-20/21-166 գրությամբ փաստվում է, որ Տիգրան Գրիշայի Արզաքանցյանին կրթության վերաբերյալ առանց համարի տեղեկանք չի տրամադրվել: Ի դեպ ուշագրավ է, որ նույն ձևաթղթի վրա ներկայացված տեղեկանքներից մեկում առկա է տրամադրման ամսաթիվն ու համարը, որոնք համընկնում են ռեկտորի գրությամբ նշված ամսաթվին և համարին, իսկ մյուս տեղեկանքում բացակայում են տեղեկանքի տրամադրման ամսաթիվը և տեղեկանքի համարը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հայաստանի դեմոկրատական կուսակցության (որի ընտրական ցուցակում ընդգրկված է պատգամավորի թեկնածու Տիգրան Արզաքանցյանը) լիազոր ներկայացուցչին իրազեկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարույթի մասին, և նրա միջոցով փոխանցվել է իրազեկում ցուցակում ընդգրկված թեկնածուին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 10.06.2021թ.ժամը 15:00-ին հրավիրված նիստին ներկա էին Տիգրան Արզաքանցյանի լիազոր ներկայացուցիչներ Վահե Հովսեփյանը և Նիկոլայ ԳասպարյանըՀայաստանի դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ Զոյա Ջուլհակյանը: Վարչական վարույթի ընթացքում լիազոր ներկայացուցիչները ծանոթացան վարչական վարույթի նյութերին, ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու առաջարկությունները:

ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմում տալու օրվան նախորդող 1 461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով»:

Նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

1) նա չունի ընտրվելու իրավունք»:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Մկրտչյանի թիվ 19/8/36971-21 գրությամբ փաստվում է, որ Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Տիգրան Գրիշայի Արզաքանցյանը չի հանդիսանում վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, հետևապես չունի ընտրվելու իրավունք: Նման եզրահանգման է հանգում նաև կԿենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում առկա փաստաթղթերի ուսաումնասիրմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Անվավեր ճանաչել Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակի 1-ին համարում ընդգրկված պատգամավորի թեկնածու Տիգրան Գրիշայի Արզաքանցյանի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**